ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՊԿ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ

Ապրիլի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների ներքին գործերի նախարարներին՝ գլխավորությամբ ՀԱՊԿ Գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժայի եւ ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի:

Հանդիպմանը ՀՀ ոստիկանապետը Նորին Սրբությանը ներկայացրեց ՀԱՊԿ անդամ պետությունների ներքին գործերի նախարարների երեւանյան հավաքի նպատակը եւ մանրամասները:

Ողջունելով հյուրերին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունը բերեց հավաքի մասնակիցներին՝ հաջողություններ մաղթելով ժողովի աշխատանքներին: Նորին Սրբությունը կարեւորեց համագործակցությունը ՀԱՊԿ անդամ երկրների առջեւ ծառացած խնդիրների հաղթահարման գործում:

Անդրադարձ կատարվեց հասարակության մեջ բարոյական արժեքների ամրապնդման անհրաժեշտությանը, ինչում մեծապես կարեւորվեց Եկեղեցու առաքելությունը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԱՌՈՒՍԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ստեփան Սուխորենկոյին:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների միջեւ առկա բարեկամական կապերի, երկրների սերտ գործակցության եւ Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների մասին: Անդրադարձ կատարվեց նաեւ երկու ժողովուրդների հոգեւոր կյանքին, եկեղեցիների կարեւոր դերակատարությանը հասարակության մեջ բարոյական-հոգեւոր արժեքների ամրապնդման գործում:Կարեւորվեց Մայր Աթոռի եւ ՀՀ-ում Բելառուսի դեսպանատան միջեւ ձեւավորված ջերմ կապերի առավել զորացումը: